ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

ք. Արտաշատ, «15» հուլիսի 2020 թ.

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետև՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետև՝ Ինստիտուտ) և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի (այսուհետև՝ Մարզպետարան) միջև:

Հաշվի առնելով Ինստիտուտի և Մարզպետարանի փոխադարձ համագործակցության միջոցով «պետություն-կրթություն-տնտեսություն-զարգացում» քառամիասնության ապահովման ձգտումը.

Կարևորելով պրակտիկ հետազոտությունների իրականացումը և արդյունքների ներդրումը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության.

Բարձր գնահատելով Ինստիտուտի և Մարզպետարանի պատրաստակամությունը՝ Ինստիտուտի ուսանողների պրակտիկաների կազմակերպման, գիտական և մարզական միջոցառումների համատեղ կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով փոխադարձ պայմանավորվածությունները.

Որոշեցին կնքել սույն Հուշագիրը հետևյալի մասին՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Ինստիտուտը և Մարզպետարանը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն Հուշագրով սահմանված համագործակցության շրջանակներում Մարզպետարանը Ինստիտուտին ներկայացնում է մարզում տեղակայված հանրակրթական դպրոցներում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման և մարզադպրոցներում մարզումների կազմակերպման, ֆիզիկական կուլտուրայի կիրառման արդյունավետության

բարձրացման, հանրային առողջության քարոզչության ոլորտներում ՀՀ Արարատի մարզում առկա խնդիրները, որոնց ուսումնասիրման և այդ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա Ինստիտուտն իր մասնագիտական ամբիոններում ձևավորում է մագիստրոսական թեզերի, ատենախոսությունների և այլ գիտագործնական աշխատանքների թեմաներ

2.2 Ինստիտուտն իր պատրաստակամությունն է հայտնում իր ուսանողներին առաջարկել պրակտիկ թեմաներ՝ Ինստիտուտի մասնագիտական ամբիոններում և ՀՀ Արարատի մարզում հետազոտություններ իրականացնելու համար, իսկ Մարզպետարանը պատրաստակամություն է հայտնում գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել այդ հետազոտություններն իրականացնողներին:

2.3 Սույն հուշագրով Ինստիտուտը և Մարզպետարանը համագործակցում են նաև.

2.3.1 համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման, ինչպես նաև Ինստիտուտի և Մարզպետարանի լիազոր ներկայացուցիչների միջոցով Մարզպետարանում մագիստրոսական թեզերի պաշտպանությունների կազմակերպման և շրջանավարտներին տվյալ ոլորտում ՀՀ Արարարտի մարզում աշխատանքի անցնելուն աջակցման հարցերի շուրջ

2.3.2 ներդրումային, նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ

2.3.3 գիտական համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման ոլորտներում

2.3.4 Ինստիտուտի և Մարզպետարանի գործունեության ոլորտներին առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում

2.3.5 սույն Հուշագրի գործողությամբ սահմանվող՝

- Ինստիտուտի և Մարզպետարանի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, մարզաբազաների, տարածքների, գույքի օգտագործման
- երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման
- համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու
- Ինստիտուտի ուսանողների մասնագիտացմանն առնչվող գիտագործնական և մասնագիտական կատարելագործման, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների ներդրման ուղղություններով:

3. Համագործակցության սկզբունքները

Ինստիտուտը և Մարզպետարանը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութներ

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Ինստիտուտի և Մարզպետարանի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Մարզպետարան**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Արտաշատ,
Ռեկտորի ժ/պ՝ Դավիթ Խիթարյան	Մարզպետ՝ Գարիկ Սարգսյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.